Երևանի Աջափնյակ վարչական շրջանում բնակելի թաղամասի վերակառուցման ծրագիր



Ծրագրի նկարագիրը

Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան, Էստոնական, Շինարարների և Աբելյան փողոցներով պարփակված թաղամասի վերակառուցման նպատակն է տարածքի առավել արդյունավետ պլանավորումը և օգտագործումը՝ հաշվի առնելով քաղաքացիների ժամանակակից պահանջները և կարիքները:
Նախագծվող ամբողջ միջավայրը՝ շենքերը, ճանապարհները, անցումները, հարմարեցված և մատչելի է լինելու նաև հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար: Նախատեսվում են թեքահարթակներ, համապատասխան չափերի վերելակներ, հարմարեցված սանհանգույցներ:



Տեխնիկական ցուցանիշներ

Թաղամասի մակերեսը՝ 13.53 հա:
Մշակված բնակելի թաղամասի կառուցապատման էքիզային նախագծով նախատեսված է.
- 3-սեկցիա ունեցող բնակելի շենք՝ 5 հատ,
-անկյունային լուծմամբ 5-սեկցիա ունեցող բնակելի շենք՝ 16 հատ,
-դպրոց՝ 1 հատ,

-մանկապարտեզ՝ 1 հատ,
-2-հարկանի առևտրի կենտրոն՝ 1 հատ, ինչպես նաև ցոկոլային հարկում ավտոկայանատեղի, մեկ հարկի մակերեսը 1760 քառ.մ,
-թաղամասի համար ընդհանուր հանգստի կանաչ գոտի /այգի/:
Առևտրի կենտրոնին կից նախատեսված բնակելի շենքը անհրաժեշտության դեպքում կարող է նախագծվել որպես հյուրանոց:



ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
բնակելի թաղամասի գոյություն ունեցող վիճակի և նախագծային լուծումների

NN	Ցուցանիշների անվանումը	Միավորը	Քանակը	
			առկա	նախագծային
1	2	3	4	5
	Բնակելի շենքեր	հատ	25/4-հարկ./ և 1 /12-հարկ./	16 /5-սեկց./ և 5 /3-սեկց./
	Բնակարաններ	հատ	1 416	3 612
	Բնակելի շենքերի մակերես, որից	քառ.մ	84 624	369 600
	բնակելի հատված		84 624	316 800
	ավտոկայանատեղի		0	52 800
	Դպրոց	հատ	1	1
	Մարզադպրոց	հատ	1	0
	Մանկապարտեզ	հատ	2	1
	Առևտրային կենտրոն	հատ	0	1
	Բնակչություն	մարդ	4 700	14 400

Ծրագրի ժամկետներ Ծրագրի իրականացման տևողությունը՝ 5 տարի:

Ծրագրի արժեքը Իրացման և շինարարության արժեքը կազմում է շուրջ 100 մլն ԱՄՆ դոլար:

Ներդրումների ձևը և հիմնական պայմանները Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում:

Ներկա իրավիճակ Առկա է էսքիզային նախագիծ՝ մշակված «Երևան նախագիծ» ընկերության կողմից: